ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-24/25-Ի/ԻՀՊ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Խաչատուր Ստեփանի Մայրապետյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 121 635 100 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 121 635 100 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	Կազմակերպություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	Երևան, Նորագյուղ 108 Հ/հ՝ 900018005455 ՀՎՀՀ՝ 01803321 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝	Կազմակերպության տնօրեն՝
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Աշոտ Սերոբի Սաղյան	Խաչատուր Ստեփանի Մայրապետյան
Ծրագրի գիտական ղեկավար՝	Ստեփան Մայրապետյան
_____ (ստորագրություն)	

Հավելված N 1
20 հունվարի 2025թ.
N 1-24/25-I/IHP պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Խաչատուր Ստեփանի Մայրապետյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-24/25-I/IHP պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 121 635 100 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա	**Կազմակերպություն**
Նախագահ՝	տնօրեն՝
Կ. S.	Կ. S.
(ստորագրություն)	(ստորագրություն)
Աշոտ Սերոբի Սաղյան	Խաչատուր Ստեփանի Մայրապետյան

Հավելված N 2
20 հունվարի 2025թ.
N 1-24/25-I/ІНР պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	13
Այլ պարբերականում հրապարակում՝	4
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	11

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Խաչատուր Ստեփանի Մայրապետյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Կարապետյան Աստղիկ Սերյոժայի

Կ. Տ.

Հավելված N 3
20 հունվարի 2025թ.
N 1-24/25-Ի/ԻՀՊ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	105 119 700	21 023 940	26 279 925	26 279 925	31 535 910
2.	տնտեսական ծախսեր՝	5 967 000	1 193 400	1 491 750	1 491 750	1 790 100
3.	այլ ծախսեր՝	10 548 400	2 109 680	2 637 100	2 637 100	3 164 520
Ընդամենը՝		121 635 100	24 327 020	30 408 775	30 408 775	36 490 530

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Խաչատուր Ստեփանի Մայրապետյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Հռիփսիմե Գառնիկի Զուրաբյան

Կ.Տ.

Հավելված N 3.1
20 հունվարի 2025թ.
N 1-24/25-I/IHP պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/h	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**5 967 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	4 800 000
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	700 000
4.	*կապի ծառայություն*	455 000
5.	*աղբահանություն*	12 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**10 548 400**
1.	սարքեր, սարքավորումներ	450 000
2.	գույք	250 000
3.	գործուղումներ	1 700 000
4.	քիմիական նյութեր, սննդաաղեր	2 100 000
5.	հրատարակման ծախսեր	1 000 000
6.	այլ նյութեր	1 600 000
7.	այլ ծախսեր	3 448 400

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Խաչատուր Ստեփանի Մայրապետյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Հռիփսիմե Գառնիկի Քուրաբյան

Կ. Տ.

Հավելված N 4
20 հունվարի 2025թ.
N 1-24/25-I/ԻՀԲ պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)
B - ամիսների քանակ
C - աշխատաժամանակի ռեժիմ
D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
E - գումարային

՝՝ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Մայրապետյան Խաչատուր Ստեփանի	Տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Մայրապետյան Ստեփան Խաչատուրի	Տնօրենի խորհրդական	250 000	12	ներքին համատեղություն	20	3 000 000
Ղահրամանյան Արիստակես Արսենի	Փոխտնօրեն	165 000	12	հիմնական	30	1 980 000
Թադևոսյան Աննա Հովհաննեսի	փոխտնօրեն	150 000	12	ներքին համատեղություն	20	1 800 000
Կարապետյան Աստղիկ Սերյոժայի	Գիտքարտուղար	125 000	12	ներքին համատեղություն	20	1 500 000
Զուրաբյան Հռիփսիմե Գառնիկի	Գլխավոր հաշվապահ	460 000	12	հիմնական	40	5 520 000
Քասապլյան Վաչագան Զատիկի	Պահակ	95 625	12	հիմնական	40	1 147 500
Մանուչարյան Մանվել Սերյոժայի	Պահակ	95 625	12	հիմնական	40	1 147 500
Նահապետյան Արաքսյա Հարությունի	Դռնապան-հավաքարար	95 625	12	հիմնական	40	1 147 500
Ղարիբյան Էդուարդ Սուրենի	Էլեկտրիկ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Ավետիսյան Ռուստամ Գևորգի	Պահակ	48 750	12	ներքին համատեղություն	20	585 000
Մանուչարյան Իզադորա Վիկտորի	Պահակ	48 750	12	ներքին համատեղություն	20	585 000
Մանուչարյան Մանվել Սերյոժայի	Պահակ	48 750	12	ներքին համատեղություն	20	585 000
Ղարիբյան Էդուարդ Սուրենի	պահեստապետ	50 000	12	ներքին համատեղություն	20	600 000
Ավետիսյան Ռուստամ Գևորգի	Պահակ	95 625	12	հիմնական	40	1 147 500
Բաղդասարյան Աննա Ռաֆիկի	Տնօրենի օգնական	130 000	12	հիմնական	40	1 560 000
Ռոստոմյան Կարեն Վարդգեսի	բանվոր	95 625	12	հիմնական	40	1 147 500
Ավետիսյան Հարություն Արմանի	պահակ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Գիտական անձնակազմ						
Լաբորատորիա Բույսերի սննդառության և արդյունավետության լաբորատորիա						
Մայրապետյան Ստեփան Խաչատուրի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Ղալաչյան Լաուրա Մեսրոպի	Առաջատար գիտաշխատող	277 375	12	հիմնական	25	3 328 500
Սիսեռյան Ռուբեն Զարեհի	Ավագ գիտաշխատող	257 450	12	հիմնական	30	3 089 400
Կարապետյան Աստղիկ Սերյոժայի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Հակոբջանյան Անահիտ Արմենի	Ավագ գիտաշխատող	85 817	12	հիմնական	10	1 029 804

Թովմասյան Անահիտ Հովհաննեսի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Բաբայան Մարինե Մարտինի	Կրտսեր գիտաշխատող	53 000	12	հիմնական	10	636 000
Ասատրյան Արմենուհի Զոհրաբի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Խաչատրյան Լիանա Գեղամի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Զուրաբյան Հռիփսիմե Գառնիկի	Ավագ ճարտարագետ	89 620	12	ներքին համատեղություն	20	1 075 440
Գասպարյան Արմեն Վարազդատի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Շաբոյան Գայանե Գևորգի	Կրտսեր գիտաշխատող	157 744	12	հիմնական	30	1 892 928
Սահակյան Հասմիկ Վաչիկի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Ղևոնդյան Արամ Հարությունի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Խումբ Վայրի և ուտելի բույսերի ինտրոդուկցիայի խումբ						
Թադևոսյան Աննա Հովհաննեսի	Առաջատար գիտաշխատող	443 800	12	հիմնական	40	5 325 600
Դարյադար Մահսա Խալեղվերդի	Ավագ գիտաշխատող	171 634	12	հիմնական	20	2 059 608
Ղահրամանյան Արիստակես Արսենի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Մաթևոսյան Արթուր Ջիվանի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Ստեփանյան Անժելիկա Սերգեի	Կրտսեր գիտաշխատող	115 163	12	հիմնական	20	1 381 956
Լաբորատորիա Հյուսվածքային մշակույթի լաբորատորիա						
Վարդանյան Անուշ Պետրոսի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Սարդարյան Անուշ Արտուշի	Ավագ լաբորանտ	179 240	12	հիմնական	40	2 150 880
Բաղդասարյան Վարդուհի Գառնիկ	Կրտսեր գիտաշխատող	53 000	12	հիմնական	10	636 000
Գասպարյան Թերեզա Սամվելի	Կրտսեր գիտաշխատող	53 000	12	հիմնական	10	636 000
Սարգսյան Անուշ Ժորայի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Բաժին Հիդրոպոնիկական փորձարարական կայան (Երևան, Դիլիջան)						
Բաբախանյան Միշա Աշոտի	Առաջատար գիտաշխատող	277 375	12	հիմնական	25	3 328 500
Հովհաննիսյան Լուսյա Էմիլի	Առաջատար գիտաշխատող	443 800	12	հիմնական	40	5 325 600
Էլոյան Սիլվա Ազատի	Գիտաշխատող	210 325	12	հիմնական	30	2 523 900
Եղիազարյան Աննա Սպարտակի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Մայրապետյան Խաչատուր Ստեփանի	Ղեկավար	238 435	12	ներքին համատեղություն	20	2 861 220
Մանուչարյան Իզադորա Վիկտորի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						105 119 700

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Խաչատուր Ստեփանի Մայրապետյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն) _____ (ԱԱՀ)

Կ. S.

Հավելված N 5

«20» հունվարի 2025 թ.

N 1-24/25-I/IHP պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«_ *Բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու ագրոքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակումը* »

ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ծրագրի նպատակն է հիդրոպոնիկ մշակույթ ներմուծել արժեքավոր, հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող դեղատու, եթերայուղատու, սննդային, տեխնիկական, ծառաթփային և այլ բուսատեսակներ, մշակել դրանց բացօթյա հիդրոպոնիկ աճեցման գիտական հիմունքները, լրամշակել և կատարելագործել արդեն անհող մշակույթ ներմուծված բույսերի աճեցման կենսատեխնոլոգիաները: Բույսերի անհող մշակման տեխնոլոգիաները, որոնք կառաջադրվեն արտադրության մեջ ներդնելու, հնարավորություն կտան բուսական հումքի արտադրության ոլորտ ներառել մեր հանրապետությունում առկա, սովորական երկրագործության համար ոչ պիտանի, տասնյակ հազարավոր հեկտարների հասնող աղուտ-ալկալի, քարքարուտ և ավազուտ հողատարածքները, բաց հանքերը:

Ծրագրի նպատակներից մեկն է նաև բույսերի անհող մշակույթ ներմուծել նոր, տարրաշխարհիկ, ոչ ավանդական բուսատեսակներ /հատկապես՝ սննդային և դեղատու/, ուսումնասիրել դրանց Հայաստանի բնակլիմայական պայմաններին հարմարվելու պոտենցիալ հնարավորությունները, ինչպես նաև հետազոտել դրանց մեր պայմաններում առավելագույն արդյունավետություն ապահովող միջավայրի գործոնների ազդեցությունը բույսերի ֆիզիոլոգա-դեղա-կենսաքիմիական, ռադիոագրոքիմիական ցուցանիշների ու սննդային արժեքի վրա:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

2025 թ. իրականացվելու են նոր և շարունակվելու են նախկինում բույսերի բացօթյա հիդրոպոնիկ մշակույթ ներմուծված (ինտրոդուցված) հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող մի շարք դեղատու, եթերայուղատու, սննդային և այլ բուսատեսակների հետազոտությունները (քիմիոն սև - *Nigela sativa* L., գանգուր ավելուկ – *Rumex crispus* L., մայորան խնկածաղիկ - *Origanum majorana* L., սուտերլանդիա - *Sutherlandia frutescens* (L.) R.Br., շատավարի – *Aspargus racemosus* Willd., աշվագանդա - *Withania somnifera* L., նրբածաղիկ ռեհան -*Ocimum tenuiflorum* L. և այլն)՝ անհող աճեցման ֆիզիոլոգա-դեղա-կենսաքիմիական, ագրո-ռադիոքիմիական

հատկությունների ուսումնասիրման, կենսատեխնոլոգիաների գիտական հիմունքների մշակման և արդյունավետության մաթեմատիկական մոդելավորման, որոշների հիդրոպոնիկ աճեցման տեխնոլոգիական փուլերի կատարելագործման նպատակով: Շարունակվելու են հետազոտությունները մշակովի քրքումի - *Crocus sativus* L. և յուղատու մորինգայի - *Moringa oleifera* Lam. *in vitro* և հիդրոպոնիկ *ex vitro* համակցված մեթոդով կենսատեխոլոգիայի մշակման ուղղությամբ:

Շարունակվելու են նաև մի շարք ծառաթփատեսակների տնկիների /թխկի - *Acer*, կեչի - *Betula pendula* Roth, սոֆորա - *Sophora* և այլն/ աճեցման համար նախատեսված կենսատեխնոլոգիական փուլերի ուսումնասիրությունները բացօթյա հիդրոպոնիկական պայմաններում՝ ստանդարտին համապատասխան, հզոր արմատային համակարգ ունեցող և բարձր կպչողականությամբ տնկիների արագացված արտադրության համար:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ծրագրի նպատակների իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- բույսերի անհող աճեցման կենսատեխնոլոգիական հետազոտություններ, գիտական տվյալների ձեռք բերում, դրանց մաթեմատիկական մոդելավորում;
- միջավայրի տարբեր գործոնների ազդեցությունը բույսերի աճման, զարգացման, բերքի ու բուսահումքի քանակական ու որակական ցուցանիշների վրա (հիդրոպոնիկ լցանյութեր և այլն);
- սննդալուծույթի կազմի, խտության և մակրոտարրերի հարաբերության ազդեցությունը բույսերի բերքատվության ու որակական ցուցանիշների վրա;
- Բույսերի ֆիզիոլոգա-կենսաքիմիական և ագրո-ռադիոքիմիական առանձնահատկությունների բնութագրում.
  - ❖ ֆիզիոլոգիական հետազոտություններ /ջրային ռեժիմ, ֆոտոսինթեզող գունանյութերի պարունակություն, ֆլյուրոսցենցիա և այլն/,
  - ❖ կենսաքիմիական ու դեղաքիմիական հետազոտություններ /կենսաբանորեն ակտիվ միացությունների /եթերայուղեր, ֆլավոնոիդներ, ալկալոիդներ, և այլն/ սինթեզի խթանում՝ արմատային սննդառության կարգավորման միջոցով;
  - ❖ ռադիոքիմիական հետազոտություններ /գումարային β-ակտիվություն և այլն/,
  - ❖ ագրոքիմիական հետազոտություններ /կարևոր հանքային տարրերի, ծանր մետաղների պարունակություն և այլն/;
  - ❖ սննդային արժեքի բնութագրում /սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, թաղանթանյութ, վիտամիններ և այլն/;

- ստացված բուսահումքի կամ դրանցից անջատված առանձին միացությունների հակասնկային, հակաբակտերիալ, հակաօքսիդանտային և այլ հատկությունների ուսումնասիրում;
- դժվար բազմացող ու մեծ պահանջարկ ունեցող արժեքավոր բուսատեսակների *in vitro* հավաքածուի պահպանում և հարստացում, դրանցից մի քանիսի արագ բազմացում *in vitro* և հիդրոպոնիկ (*ex vitro*) համակցված եղանակով;
- նոր, թանկարժեք, հազվագյուտ, տարրաշխարհիկ բույսերի Հայաստան ներմուծման /ինտրոդուկցիայի/ և բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում դրանց մանրազնին ուսումնասիրման աշխատանքներ;
- մեծ պահանջարկ ունեցող վայրի ուտելի բույսերի կուլտուրականացում;
- ինստիտուտում գործող մի քանի հիդրոպոնիկական համակարգերի /դասական, ջրաշիթային, NFT, օրգանական, ուղղաձիգ աերոպոնիկա, ակվապոնիկա, կաթիլային հիդրոպոնիկա/ ցուցադրական փորձեր;
- ադապտագեն բույսերի և գեղազարդ ծառաթփերի առանձնահատկությունների ուսումնասիրում Դիլիջանի անտառային հիդրոպոնիկական փորձակայանի կենսաերկրահամակեցության պայմաններում;
- բույսերի աճեցման հիդրոպոնիկ կենսատեխնոլոգիայի կիսաարտադրական փորձարկումներ և դրանց արդյունավետության գնահատում:

Բույսերի հիդրոպոնիկ աճեցման կենսատեխնոլոգիայի մշակումը ներառում է մի քանի իրար հետ փոխկապակցված փուլեր.

- Արարատյան դաշտի բացօթյա պայմաններում բույսի հարմարվողականության հաստատում,
- լավագույն հիդրոպոնիկական լցանյութի ընտրություն,
- լավագույն սննդալուծույթի ընտրություն,
- հանքային սննդառության օպտիմալացում.
  - ❖ մակրոտարրերի օպտիմալ խտության ճշգրտում,
  - ❖ մակրոտարրերի (NPK) օպտիմալ հարաբերակցության ճշգրտում,
- սնուցման ռեժիմի կարգավորում /հաճախականություն և այլն/,
- արդյունավետ սնման մակերեսի բացահայտում,
- բերքահավաքի առանձնահատկությունների բացահայտում /հարերի թիվ, ժամկետ և այլն/,
- բացօթյա հիդրոպոիկայում բույսի աճեցման արդյունավետության գնահատում,
- կիսաարտադրական փորձարկումներ, արտադրության մեջ ներդնելու առաջարկների մշակում և այլն:

Ծրագիրն իրականացվելու է 1 տարում, սակայն գրեթե բոլոր հետազոտությունները, հաշվի առնելով բույսերի աճեցման կենսատեխնոլոգիայի բաղկացուցիչ մաս կազմող բազմաթիվ փուլերը (բույսի ներմուծում հիդրոպոնիկ մշակույթ, լավագույն լցանյութի, ամենաարդյունավետ սննդալուծույթի կազմի, խտության, մակրո և միկրոտարրերի հարաբերակցության ընտրություն, սնման մակերես, սնուցման ռեժիմ, բերքահավաքի ժամկետ և այլն, ֆիզիոլոգիա-կենսա-դեղաքիմիական, ագրո-ռադիոքիմիական հետազոտություններ, կիսա-արտադրական փորձարկումներ և այլն) և դրանց իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը /առնվազն 3-4 տարի/, կունենան շարունակական բնույթ:

Հետազոտությունները տարվելու են ինչպես անհող /առկա են. դասական, ջրաշիթային և կաթիլային հիդրոպոնիկական փորձարարական կայան (2200 մ²), ցողաջրաշիթա-թաղանթային հիդրոպոնիկական մոդուլ՝ իր չորս տարատեսակներով, հիդրոպոնիկ վեգետացիոն փորձադաշտ, օրգանական հիդրոպոնիկայի նորակառույց մոդուլ, բազմահարկ, հորիզոնական և ուղղահայաց NFT համակարգեր, ուղղաձիգ և հորիզոնական աերոպոնիկա, տարբեր սնման մակերեսներով (0,04; 0.06; 0,09; 0,12; 0,16; 1,0; 2,0 մ²) ավտոմատ սնուցվող վեգետացիոն հիդրոպոնիկ անոթներ, սարքավորումներ և տեղակայանքներ, ջերմոց՝ 12 մ², սենյակային ջերմատան մոդուլ/, այնպես էլ հողային մշակույթի_պայմաններում /առկա են մոտ 400 մ² հողային ստուգիչ փորձամարգեր/: Բույսերի հանքային /արմատային/ սննդառության օպիմալացման, արդյունավետության բարձրացման, ֆիզիոլոգա-կենսաքիմիական, դեղաքիմիական և ռադիո-ագրոքիմիական հատկությունների ուսումնասիրման համար առկա են բույսերի սննդառության և արդյունավետության լաբորատորիա, հյուսվածքային մշակույթի լաբորատորիա, ֆիզիոլոգիայի, դեղաքիմիայի և կենսաքիմիայի, ագրոքիմիայի ու ռադիոքիմիայի խմբեր:

Կազմակերպության տնօրեն՝ (Խաչատուր Մայրապետյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝ (Ստեփան Մայրապետյան)

Հավելված N 6
«20» հունվարի 2025 թ.
N 1-24/25-I/IHP պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու ագրոքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակումը»
ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	*1-ին փուլ*	գիտական գրականության մշակում, վեգետացիայի նախապատրաստման աշխատանքներ	հիդրոպոնիկ փորձարարական կայանի լաստակների և վեգետացիոն անոթների, սննդալուծույթ մղող խողովակների վերանորոգում, լցանյութերի լրացում, ախտահանում և այլն	*01.01.-31.03. 2025թ.*
2	2-րդ փուլ	վեգետացիայի նախապատրաստման աշխատանքներ, սերմերի և տնկանյութի ձեռքբերում կամ աճեցում, վեգետացիայի սկիզբ, բույսերի խնամք, կեն-սամետրիկ չափումներ	լցանյութերի լվացում և ախտահանում, սննդալուծույթի պատրաստում, սերմերի ցանք, կտրոնների տնկարկ, սննդաաղերի և այլ անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, տարբեր սննդալուծույթների պատրաստում, սնուցում	01.04-30.06. 2025թ.
3	3-րդ փուլ	բույսերի խնամք, կեն-սամետրիկ չափումներ, ֆիզիոլոգա-կենսաքիմիական առանձնահատկությունների բացահատում	սնուցում, բերքահավաք, տարբեր վերլուծություններ /կենսաքիմիական, դեղաքիմիական, ագրո-ռադիոքիմիական, ֆիզիոլոգիական և այլն/, տվյալների մշակում, հոդվածների հրատարակում,	01.07-30.09. 2025թ.
4	4-րդ փուլ	կենսամետրիկ չափումներ, ֆիզիոլոգա-կենսա-դեղաքիմիական և ագրո-ռադիոքիմիական վերլուծություններ	Սնուցում, բերքահավաք, տարբեր վերլուծություններ /կենսաքիմիական, դեղաքիմիական, ագրո-ռադիոքիմիական, ֆիզիոլոգիական և այլն/, տվյալների մշակում և	01.10-31.12. 2025թ.

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

			վերլուծում, գիտաժողովների մասնակցություն, հաշվետվության կազմում, հոդվածների հրատարակում	

Կազմակերպության տնօրեն՝ (Խաչատուր Մայրապետյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝ (Ստեփան Մայրապետյան)